ՀԱՆԳԻՍՏ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

(1879—1965)

Օգոստոսի 22-ին, կիրակի, երեկոյան ժամը 5.30-ին, Մայր Աթոռում 86 տարեկան հասակում վախճանվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի նախկին վաստակավոր լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Հանգուցյալը ծնվել էր Թիֆլիսում, 1879 թվականի օգոստոսի 11/24-ին։ Մկրտության անունը եղել է Լևոն։ Նախնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցում, այնուհետև մտնելով Ներսիսյան հոգևոր դպրոցը, ավարտել է այն 1899 թվականին։

Դպրոցն ավարտելուց հետո, վարել է ուսուցչության և վերակացության պաշտոն։ Ծառայել է Արմավիրի և Աստրախանի հայոց եկեղեցիներում։

Ստավրոպոլ քաղաքի ծխականների կողմից ընտրվելով քահանայության թեկնածու, 1903 թվականի փետրվարի 9-ին Արիստակես արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվում է քահանա և նշանակվում կրոնի ուսուցիչ Ստավրոպոլի գիմնազիաներում և հայկական դպրոցներում։

Այնուհետև, երիտասարդ Տ. Սահակ քահանայի առաջ բացվում է եկեղեցական-հասարակական գործունեության լայն ասպարեզ։

Տ. Սահակ քահանա Տեր-Հովհաննիսյանը ունեցել է նաև գրական-եկեղեցական գործունեություն։ 1909—1919 թվականներին նա հրատարակել է ռուսերեն ընդարձակ օրացույց՝ ռուսախոս հայերի համար։ Նա հրատարակել է նաև կրոնի դասագիրք հայ-ռուսերեն բառարանով, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կենսագրականը, Գևորգ Ե կաթողիկոսի կենսագրականը, հայկական տառերի գյուտի 1500-ամյակի առթիվ 1912 թվականին «Հայ ժողովրդի մեծ տոնը» և Հայ Եկեղեցու Պատարագամատույցի ռուսերեն թարգմանությունը մանրամասն բացատրությամբ։ Թղթակցել է նաև հայ և ռուս պարբերական մամուլին։ Իր գործունեության և աշխատանքի համար Տ. Սահակը արժանացել է Խրիմյան Հայրիկի, Գևորգ Ե և Խորեն կաթողիկոսների գնահատության և եկեղեցական պարգևատրումներին։

1945 թվականից անդամ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության։ 1947 թվականին արժանանում է ծայրագույն վարդապետության աստիճանին և նշանակվում է Մայր Տաճարի ավագ լուսարար։

Սկսած 1946 թվականից, նա է կազմել Ս. Էջմիածնի օրացույցը։

Երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսը 1951 թվականի հուլիսի 8-ին արժանացնում է նրան եպիսկոպոսական բարձր աստիճանի։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, գնահատելով Մայր Աթոռի միաբան, լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի երկարամյա և օգտաշատ ծառայությունները եկեղեցական-վանական և ուսուցչական հասարակական ասպարեզներում, իր գահակալության առաջին տարեդարձի երջանիկ առիթով, 1956 թվականի հոկտեմբեր 7-ին, սրբազանին շնորհում է արքության պատիվ։

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հայ եկեղեցականության երիցագույն և սիրված վերջին մոհիգաններից մեկն էր։ Նա հոգևորականի իր պատրաստությամբ, հավատարիմ ծառայությամբ և մանավանդ զվարթ բնավորությամբ, իր համեստ անձի շուրջ ստեղծել էր համակրանք և սեր։

Հանգուցյալ սրբազանը, հակառակ իր առաջացյալ տարիքին, հոգով արի էր, աշխատանքում ժիր՝ մինչև վերջին ժամանակները։

Հանգուցյալի վերջին օծումը կատարվեց օգոստոսի 25-ին, չորեքշաբթի օրը, Մայր Տաճարում, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանի։

Դամբանականը խոսեց Բաքվի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, վեր հանելով հանգուցյալի կյանքի և գործունեության ուսանելի կողմերը։

Ժամը 1-ին, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոսի նախագահությամբ, կատարվեց հանգուցյալի թաղման արարողությունը և աճյունը ամփոփվեց Ս. Գայանեի վանքի միաբանական գերեզմանատանը, ուր դամբանականներ խոսեցին Տ. Վահան եպիսկոպոսը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Ժամը 3-ին, վանական սեղանատանը, տրվեց հոգեճաշ, ուր հանգուցյալի հիշատակը ոգեկոչեցին Տ. Մաշտոց եպիսկոպոսը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ Գրիգոր Բեքմեզյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Հանգի՜ստ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ոսկորներին։